ISSN 2953-805X

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

НАІА-7

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ХАИА-7

IAE PUBLICATION ▪ ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ
YEREVAN 2025 ЕРЕВАН

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԻԱ-7

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7

ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՒԱՆ 2025

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Published by decision of the Scientific Council of the Institute of Archaeology and Ethnography, NAS of RA

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ *Արսեն Բոբոխյան*

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ *Տորք Դալալյան*

Խմբագրակազմ՝ *Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Ջուստո Թրաինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատրուրեան, Ռուբեն Կարապետյան, Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան, Դիանա Միրիջանյան, Ադամ Սմիթ, Պատրիկ Տօնապետեան, Պիտեր Քաուի*

Editorial Board

Editor-in-Cief: *Arsen Bobokhyan*

Vice-Editor-in-Chief: *Tork Dalalyan*

Editorial Stuff: *Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Diana Mirijanyan, Adam Smith, Giusto Traina*

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 7-րդ հատորն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, UCLA համալսարանի Ֆաուլերի թանգարանի (Լոս-Անջելես, Կալիֆորնիա) և Վիլնյուսի Եւրոպական հումանիտար համալսարանի (Լիտվա) հետազոտողների հոդվածներն ու հաղորդումները, որոնց նախնական տարբերակները որպես զեկուցում ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 2023թ. դեկտեմբերի 12–13-ին ՀԱԻ Սփյուռքի ուսումնասիրության բաժնի և Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի համատեղ կազմակերպած «Էթնոսոցիալական փոփոխությունները հայկական Սփյուռքում» գիտաժողովին: Հատորը եզրափակվում է Սփյուռքում հրատարակվող երկու պարբերականների վերջին համարների ընդարձակ գրախոսություններով և լրատուով:

ISSN 2953-805X
DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

I. ՀՀ–ՍՓՅՈՒՌՔ, ՀՀ–ԱՐՏԵՐԿԻՐ. ՓՈԽԿԱՊԵՐ ԵՎ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռոբերտ Կարապետյան
Հայաստանի Հանրապետության հետ Սփյուռքի միգրացիոն կապերի մասին 8

Հրաչիկ Վարդանյան
Մարիամ Հակոբյան
Ինքնության քաղաքականությունը՝ որպես պետություն-սփյուռք
գործակցության բաղադրիչ (ՀՀ–Սփյուռք հարաբերությունների պարագան) 21

Հրայր Ճէպէճեան
Մերձաւոր Արևելքի հայ համայնքներ և ՀՀ յարաբերութիւններ.
արդի միտումներ, մարտահրաւէրներ և հնարաւորութիւններ 34

Գայանե Հակոբյան
Նոր միգրանտների սոցիալ-մշակութային կյանքը Սփյուռքում.
հայաստանցի հարազատների դիտանկյունը 48

Սոնա Ներսիսյան
Ռուսաստանցի և հնդկաստանցի ներգաղթյալների
ինտեգրման փորձառությունը Հայաստանում 59

II. ԱՐԵՒԵԼՅԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Ստեփան Զահարկնիչ
Արևելյան Եվրոպայի հայ համայնքների հիշողության մշակույթը
և դրա վրա պատմական քաղաքականության ու ազգային ծրագրերի
ազդեցությունը արդի փուլում 72

Սվետլանա Պողոսյան
Վառնայի հայ համայնքի սոցիալ-մշակութային առանձնահատկությունները.
իրավիճակ, միտումներ և զարգացումներ 89

Գոռ Մարտիրոսյան
Լեհաստանում հայ ներգաղթյալների տնտեսական գործունեության տեսակները,
այդ գործունեության դիվերսիֆիկացիայի և փոփոխության արդյունքները 103

Լուսինե Տանաջյան
Սյուզաննա Բարսեղյան
Հայերը Չեխիայում. համայնքային կյանքի յուրահատկություններ 113

III. ԱՄՆ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ

Միհրան Գալստյան
«Հայրենադարձություն» եզրույթը Սփյուռքի արդի գործընթացների
համատեքստում. Լոս-Անջելեսի հայ համայնքի օրինակը 126

Վերժինե Սվազլյան
Ամերիկահայոց հայապահպանման մակարդակը՝ ըստ բանավոր մշակույթի գրառված նյութերի 139

IV. ՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Նելլի Խաչատրյան
Մարիամ Հարությունյան
Կրոնատածության փոխանցումն ընտանիքում. տեսական խնդիրներ 156

Ռուբեն Օհանջանյան
Սոցիալական հեռավորության չափման՝ Բոգարդուսի սանդղակի կիրառման յուրահատկությունները 167

Բ. ՁԱՆԱՁԱՆՔ

V. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Կարեն Ասատրյան
Պոլսահայ կրթական համակարգի վկայագրեր և վիճակացույցներ (19-րդ դարավերջ – 20-րդ դարասկիզբ) 176

Սալվինե Մարկոսյան
«Հայաստան» շաբաթաթերթի դերը պոլսահայ մշակութային կյանքում 183

VI. ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Կասիա Արմենյան
Լույսով մնաք. Հայրենիքի և Սփյուռքի տեսլականները 188

VII. ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

Տորք Դալալյան
Լուսինե Հայրիյան
Մնահիտ Խեչոյան
Études arméniennes contemporaines, 2023, №15.
Ֆրանսիայի հայալեզու մամուլը և անդրազգային տարածույթի ստեղծումը 200

Անդրանիկ Տագէսեան
Հայկազեան հայագիտական հանդէսի 43-րդ և 44-րդ հատորներուն չորս գիրքերը 204

VIII. ԼՐԱՏՈՒ

Միլզան Բոնապեան
Հայագիտական ամառնային խտացեալ դասընթացքին 40-րդ տարին. Վենետիկի մեջ՝ հայկական աշխարհ 218

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 221

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 230

IV

ՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

DOI: 10.54503/2953-805X-2025.7-167

Ռոբերտ Օհանջանյան, *պ.գ.թ.*
ՀԱԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՉԱՓՄԱՆ՝ ԲՈԳԱՐԴՈՒՍԻ ՍԱՆԴՂԱԿԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջէթնիկ հարաբերություններն ուսումնասիրվում են զանազան մեթոդներով, որոնց տվյալները տեղեկատվական արդի միջոցներով հասանելի են դառնում բազմահազար մարդկանց՝ կարծիքներ ստեղծելով էթնոսների վերաբերյալ, ինչը կարող է ունենալ քաղաքական, տնտեսական, մշակութային ազդեցություններ: Միջէթնիկ հարաբերությունների ուսումնասիրման ամենատարածված մեթոդներից է՝ 1925 թ. ամերիկացի սոցիոլոգ Է. Բոգարդուսի կառուցած սոցիալական հեռավորության չափման *կումուլյատիվ* սանդղակը: Դրա հիմքում ընկած է այն գաղափարը, որ սոցիալական որևէ միջավայրում հաղորդակցվելու ցանկությունը վկայում է մարդկանց միջև սոցիալական հեռավորության մասին:

Սոցիալական հեռավորության գաղափարը ձևավորել է Ռ. Պարկը, ով եղել է Գ. Զիմմելի աշակերտը: Հետագայում Է. Բոգարդուսը, ձևակերպելով իր «սանդղակը», դրանում տեղադրեց մարդկային հարաբերությունների 7 ոլորտ, որոնցով որոշվում է՝ կցանկանա արդյոք անձը այլազգի ներկայացուցչի հետ՝ ա) ունենալ ամուսնական, ընտանեկան հարաբերություններ, բ) լինել մոտ ընկեր, գ) լինել հարևան, դ) լինել գործընկեր աշխատավայրում, ե) լինել իր երկրի քաղաքացի, զ) լինել հյուր/զբոսաշրջիկ իր երկրում, է) չի ցանկանում նրան տեսնել իր երկրում: Սանդղակն, ինչպես տեսնում ենք, կառուցված է հանդուրժողականության աստիճանի նվազման սկզբունքով:

Հիմնաբառեր՝ սոցիալական միջավայր, սոցիալական հեռավորություն, կոգնիցիա, էթնիկ դիրքորոշում, էթնիկ կարծրատիպ, կումուլյատիվ սանդղակ:

Բոգարդուսի սանդղակի օգտագործման ընթացքում նկատված շեղումները

Այս սանդղակը լայնորեն օգտագործվում է առ այսօր՝ սոցիալական զանազան միջավայրերում և պայմաններում, նպատակ ունենալով բացահայտելու միջէթնիկ հարաբերությունների վրա ազդող գործոնները: Սանդղակը հիմնականում անսխալ է գործում, սակայն սոցիոլոգիական հետազոտություններում նկատվել են որոշ շեղումներ: Մեր երկարամյա հետազոտությունները նույնպես վկայում են, որ էթնիկ դիրքորոշումների ձևավորման վրա տարբեր միջավայրերում կարող են ազդել զանազան գործոններ:

ԽՍՀՄ ԳԱ Ն.Ն. Միկլուխո-Մակլայի անվան ազգագրության ինստիտուտի սոցիոլոգիական հետազոտությունների բաժնում մշակվել էր «ԽՍՀՄ ազգերի զարգացման և մերձեցման սոցիալ-մշակութային պայմանների բարելավման» ծրագիր: Այդ ծրագրի նպատակներից էր՝ նաև միջէթնիկ հարաբերութ-

յունների ուսումնասիրումը, ուստի տեղական պայմաններին համապատասխան որոշ փոփոխություններով հետազոտություններ են իրականացվել ԽՍՀՄ մի քանի հանրապետություններում, այդ թվում՝ ՀԽՍՀ-ում[1]: Այստեղ հետազոտությունն իրականացվել է 1976 թ. Երևանում և 1980-ականներին՝ հանրապետության բոլոր տարածաշրջաններում. նյութերի վերլուծությունը չի կորցրել արդիականությունը, քանի որ հնարավորություն է տալիս ճշգրտելու մեթոդաբանական հարցեր: Ծրագրի հարցաթերթում տեղադրվել էին Բոգարդուսի սանդղակի միայն 2 հաստատումները՝ միջէթնիկ ամուսնությունների և խառնազգ *կոլեկտիվ*ում աշխատելու վերաբերյալ դիրքորոշումները:

Կումուլյատիվ սանդղակի տրամաբանության համաձայն՝ եթե անձը դրական է վերաբերվում միջէթնիկ ամուսնություններին, ապա նա դրական կվերաբերվի նաև խառնազգ *կոլեկտիվ*ում աշխատանքին, քանի որ ամենասերտ հարաբերություններն ամուսնության ոլորտում են: Սակայն առաջին իսկ նյութերում Լ.Մ. Դրոբիժևան և Ա.Ա. Սուսոկոլովը բացահայտել են շեղումներ: Որոշ հարցվողներ դրական են վերաբերվել միջէթնիկ ամուսնություններին, մինչդեռ խառնազգ կոլեկտիվներում աշխատելուն՝ բացասական:

Վերլուծելով Թաթարական Ինքնավար Հանրապետության հետազոտությունների նյութերը՝ Լ. Դրոբիժևան պարզել է դիրքորոշումների ձևավորման գործում որոշ սոցիալ-մասնագիտական, կրթական, տարիքային գործոնների խաղացած դերը: Նա հանգել է այն եզրակացության, որ երկու դիրքորոշումները լինում են *կոնկրետ* իրավիճակի հետևանք[2]: Էստոնիայում իրականացված հետազոտությունների հիման վրա նշվել է, որ խառնազգ *կոլեկտիվ*ում աշխատելու վերաբերյալ դիրքորոշումների ձևավորման վրա ազդում են ղեկավարության հետ հարաբերությունները, աշխատավարձից և աշխատանքի *ռեժիմ*ից բավարարվածությունը[3]: Յ. Հարությունյանը գտնում էր, որ խառնազգ *կոլեկտիվ*ում աշխատելու վերաբերյալ դիրքորոշումները ձևավորվում են հոգեբանական տեղակալման *մեխանիզմ*ի հետևանքով: Նա բացահայտել է, որ *միգրանտ*ների միջէթնիկ դիրքորոշումների վրա ազդում է նաև նոր վայրում բնակվելու տևողությունը[4]: Բավական հետաքրքիր եզրահանգում է կատարել Ա. Սուսոկոլովը՝ նշելով, որ հոգեբանական տեղակալումը կախված չէ անգամ ձեռնարկությունում առկա որևէ իրական բարդ իրավիճակից[5]: Այստեղ դեր է խաղում կարծրատիպերի ազդեցությունը:

ՀԽՍՀ-ում իրականացված հետազոտությունների ընթացքում ընդհանուր առմամբ սանդղակն առանց խնդիր էր աշխատում: Միայն քաղաքատիպ ավան Կալինինոյում (այժմ՝ Տաշիր), որը բազմազգ բնակավայր էր, նկատվեց որոշակի

---

1 Հայաստանում հետազոտություններն իրականացրել է ՀԽՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Էթնոսոցիոլոգիայի բաժինը՝ Է.Տ. Կարապետյանի ղեկավարությամբ 1976–1980-ական թթ.:

2 Арутюнян 1973, 299.

3 Арутюнян и др. 1979, 101.

4 Арутюнян 2016, 147.

5 Сусоколов 1973, 78.

շեղում[6]: Հարցվողների 8,1 %-ը բացասաբար էր վերաբերվում խառնազգ *կոլեկտիվ*ում աշխատելուն, իսկ խառնազգ ամուսնություններին՝ դրական[7]:

Հարցաթերթերի նախնական վերլուծությամբ պարզվեց, որ պատասխանների այսպիսի տարբերակները գրանցված են ռուս կանանց շրջանում: Քանի որ հարցաթերթում տեղադրված չէին դրանց պատճառները բացահայտող հարցեր, ուստի ռուս կանանց հետ իրականացվեցին խորին հարցազրույցներ: Կալինինոյի բնակչության բավական մեծ հատված ուներ օժանդակ տնտեսություն, բանջարանոց, անասուն, թռչուններ էին պահում. ըստ էության, բնակավայրին բնորոշ էր գյուղական ապրելակերպը: Գործում էր արծնապատ ամանեղենի գործարան, որն անցել էր տնտեսաշվարկի, և աշխատողները աշխատավարձ ստանում էին թողարկված վերջնական արտադրանքի քանակին համապատասխան: Այդ ձեռնարկությունում աշխատում էին հիմնականում կանայք: Ռուս կանանց հետ իրականացված հարցազրույցների ընդհանրացված պատկերը հիմնականում հետևյալն էր. «հայ կանանց հետ աշխատելը դժվար է»: Աշխատանքի ժամին գալիս են հարևանները կամ բարեկամները՝ տարբեր առիթներով (հավերը, անասունը մտել է ուրիշի բանջարանոցը կամ կորել է, խնդիրներ են առաջացել տանը): *«Նրանք թողնում են աշխատանքը և գնում իրենց գործերով»*: Փաստորեն, գյուղական ապրելակերպի պատճառով՝ հայ կանայք երբեմն չեն պահել աշխատանքային կարգապահությունը, ինչն, իր հերթին, ազդել է ռուս կանանց աշխատավարձի վրա: Այս դեպքում մենք նորից առնչվում ենք աշխատավարձից անբավարարվածությանը: Սակայն այդ դիրքորոշումը ձևավորվում է սոցիալական և էթնոկենցաղային յուրահատուկ գործոնների ազդեցությամբ, որն այլ բովանդակություն է հաղորդում դիրքորոշմանը, և որով հաստատվում է, որ այս սանդղակի օգտագործման դեպքում հարկ է ի նկատի ունենալ սոցիալական միջավայրի յուրահատկությունները:

Միջէթնիկ ամուսնությունների վերաբերյալ դիրքորոշումները բարդ կառուցվածք ունեն և կարող են տարբերվել զանազան ազգությունների ու սոցիալական շերտերի շրջանում: Օրինակ՝ հայտնի է, որ բազմաթիվ արևելյան ազգեր, հատկապես իսլամ դավանողները, չեն ընդունում միջէթնիկ ամուսնությունները, սակայն երբեմն ընդունելի են համարում ունենալ այլազգի կին, որին հիմնականում իսլամացնում են:

Էթնոսոցիոլոգիական հետազոտություններում միջէթնիկ ամուսնությունների դիրքորոշման վերաբերյալ հարցը ձևակերպվում է այսպես. «Ինչպե՞ս կվերաբերվեիք, եթե Ձեր հարազատներից որևէ մեկն ամուսնանար այլազգի անձնավորության հետ»: Սակայն 1980-ական թթ. հարցաթերթերի պատասխանների տարբերակներում չէր նախատեսվել *կոնկրետացնել* ամուսնության *սուբ-*

---

6 Ըստ 1979 թ. մարդահամարի տվյալների՝ Կալինինոյի ազգային կազմն այսպիսի տեսք ուներ. հայեր՝ 61,5 %, ռուսներ՝ 18,6 %, ադրբեջանցիներ՝ 12,1 %, քրդեր՝ 6,6 %, ուկրաինացիներ՝ 0,4 %, հույներ՝ 0,6 %, այլ ազգություններ՝ 0,3 %:

7 Օհանջանյան 1984, 41–45: Մոլդովական նյութերում այսպիսի տարբերակը նկատվել է հարցվողների 8,0 %-ի շրջանում: Այդ հետազոտության նյութերը մեզ է տրամադրել Ա.Ա. Սուսոկոլովը, ում հայտնում ենք մեր շնորհակալությունը:

*յեկյ*ներն՝ ըստ սեռային կտրվածքի: 2016–2017 թթ. ՀՀ-ում իրականացված էթնոսոցիոլոգիական հետազոտության նպատակներից էր՝ պարզել նաև միջէթնիկ ամուսնությունների հանդեպ վերաբերմունքը՝ փորձելով սեռային կտրվածքով բացահայտել ամուսնության *սոբյեկյ*ները: Հարցաթերթում տեղադրվեց պատասխանների երկու տարբերակ. 1. Ինչպե՞ս կվերաբերվեիք, եթե Ձեր ազգության կինն ամուսնանար այլազգի տղամարդու հետ և 2. Ինչպե՞ս կվերաբերվեիք, եթե Ձեր ազգության տղամարդն ամուսնանար այլազգի կնոջ հետ:

Նյութերի տվյալներով բացահայտվեց, որ հարցվողների 5 %-ն ավելի բացասաբար է վերաբերվում այլազգի տղամարդկանց հետ հայ կանանց ամուսնություններին[8]: Այս փաստը ևս ապացուցում է, որ դիրքորոշումները պարունակում են բարդ *կոգնիտիվ* բաղադրիչներ, և միայն սանդղավորման միջոցով հնարավոր չէ պարզել դիրքորոշումների ձևավորման պատճառները:

Կարծրատիպերը՝ որպես էթնիկ հարաբերությունների ցուցիչ

Սանդղակն օգտագործվում է նաև տարբեր փոքր միջավայրերում՝ միջէթնիկ հարաբերությունների ուսումնասիրման նպատակով: Օրինակ՝ 2013 թ. ՌԴ Արխանգելսկի պետական համալսարանի ուսանողության մեջ անցկացվել է հետազոտություն՝ Բոգարդուսի սանդղակի կիրառմամբ: Հարցաթերթում ընդգրկվել են 30 ազգության՝ այդ թվում հայերի վերաբերյալ դիրքորոշումները: Հարցումներին մասնակցել են հումանիտար մասնագիտությունների ուսանողները՝ սոցիոլոգ, լրագրող, գովազդ և հանրային կապեր: Հայերը հայտնվել են 23-րդ հորիզոնականում (4,78 բալ). նրանց մասին կարծիքները բավական բացասական էին: Այս պատկերը վկայում է, որ անգամ բարձրագույն կրթությունը բավարար պայման չէ՝ բացասական դիրքորոշումները և կարծրատիպերը հաղթահարելու համար:

COVID 19-ի պայմաններում նույնպես իրականացվել են հետազոտություններ. Բոգարդուսի սանդղակի միջոցով չափվել է չորս ազգությունների՝ հունգարացիների, իտալացիների, մոնղոլների և չինացիների հանդեպ վերաբերմունքի աստիճանը Միացյալ Թագավորությունում և Լեհաստանում: Ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է, որ համավարակային իրադրության հանդեպ նախապաշարումն ու անհանգստությունը զգայուն են, և որ COVID-ի բռնկումը կարող է հանգեցնել լուրջ սոցիալական հետևանքների՝ մեծացնելով հոգեբանական հեռավորությունը համաճարակից առավել տուժած երկրներից[9]:

Սանդղավորման մեթոդով 1926, 1946, 1956, 1966 թթ. ԱՄՆ-ում իրականացվել են լայնամասշտաբ հետազոտություններ: Հարցումների ընտրանքում ընդգրկված են եղել 40 էթնիկ հանրույթներ, այդ թվում՝ հայ Սփյուռքի ներկայացուցիչները: 1926 և 1966 թթ. համեմատական տվյալները ցույց են տալիս, որ հայերը 16-րդ հորիզոնականից իջել են 20-րդ: Անգամ սանդղակի հեղինակը՝ Բոգարդուսը, նպատակ ունենալով բացահայտելու դիրքորոշումների ձևավորման

8 Գալստյան և այլք 2017, 210–211:

9 Sorokowski et al. 2020, 1–5.

պատճառները և ուղիները, հարցումներից բացի իրականացրել է հարցազրույցներ: Ահա թե ինչ է գրում նա. *«Աղյուսակ 3-ը հետաքրքիր արդյունքներ է գրանցում, սակայն չի բացատրում արտահայտված հակակրանքի և ոչ մի դիրքորոշման պատճառը: Անձնական փորձի այդ փվյալներն այնքան հետաքրքիր էին, որքան ձևայնացված փվյալները՝ անգույն»*: Նա անդրադարձել է նաև թուրքերի հանդեպ հայերի բացասական վերաբերմունքի պատճառների բացահայտմանը: Պարզվել է, որ հայերը երբեք չեն տեսել գոնե մեկ թուրքի, և այդ բացասական կարծիքները ձևավորվել են ավագ սերնդից, զանազան տպագիր նյութերից, անգամ *միսիոներ*ների գրառումներից[10]:

Ըստ էության, հայերի վերաբերմունքը թուրքերի հանդեպ կարծրատիպային բնույթ ունի: Մարդու հոգեկան ակտիվության անբաժան տարրը գիտելիքներն են (*կոգնիտիվ* մակարդակը), որի դրսևորման ձևերից են կարծրատիպերը: Էթնիկ կարծրատիպը էթնոսների *սխեմատիկ*, ընդհանրացված, հուզական ուղղվածություն ունեցող (դրական կամ բացասական առումով) պատկերն է, որը դրսևորվում է բառերի և բառակապակցությունների տեսքով: Դրանք լայն տարածում ունեն հանրության մեջ և էթնիկ հարաբերությունների ցուցիչ են: Միայն Երևանի հարցումներում գրանցվել են հայերի 157 կարծրատիպեր (*ավտոստերեոտիպ*), ռուսների՝ 97, վրացիների՝ 76, ադրբեջանցիների՝ 55 կարծրատիպեր (*հետերոստերեոտիպ*)[11]: Դրանց մեջ կային և՛ դրական, և՛ բացասական կարծրատիպեր, որոնք արտացոլում էին հարաբերությունների բնույթը:

Եզրահանգումներ

Միջէթնիկ հարաբերությունների, հանդուրժողականության՝ էթնոսոցիոլոգիական հետազոտություններում օգտագործվող Է. Բոգարդուսի սանդղակը որոշ դեպքերում շեղումներ է տալիս: Սանդղակում ընդգրկված 7 հաստատումները դիրքորոշումներ են, որոնք տարբեր սոցիալական միջավայրերում կարող են ձևավորվել զանազան գործոնների ազդեցությամբ՝ աշխատանքից, աշխատավարձից, *կոլեկտիվ*ի ղեկավարության և գործընկերների հետ հարաբերություններից անբավարարվածությամբ, շրջապատում միջէթնիկ հաղորդակցության բացասական ազդեցությամբ, էթնիկ ավանդույթներով ևն: Ուստի սանդղակը հարկ է օգտագործել՝ ելնելով *կոնկրետ* միջավայրի յուրահատկությունից:

Միայն սանդղավորման մեթոդով ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտելու միմյանց հանդեպ էթնոսների հանդուրժողականության համեմատական գործակիցը, սակայն չի կարող տալ դրա ձևավորման պատճառների բացատրությունը: Ուստի, այդ բացը լրացնելու համար, հարկ է զուգահեռաբար իրականացնել նաև հարցազրույցներ:

Դիրքորոշումներն ունեն *կոգնիտիվ* տարր, որ կարող է հանդես գալ էթնիկ կարծրատիպերի տեսքով: Կարծրատիպերը հարաբերությունների կարևոր

10 Bogardus 1925, 216–226.

11 Оганджанян 1989, 50.

ցուցիչներ են, և դրանց ուսումնասիրության միջոցով հնարավոր է բացահայտել հարաբերությունների ձևավորման պատճառները և ուղիները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԱԼՍՏՅԱՆ և այլք 2017
Գալստյան Մ.Վ., Օհանջանյան Ռ.Ս., Ջաքարյան Թ.Զ., Հակոբյան Գ.Լ., Արդի հայ ընտանիքը փոխակերպվող հասարակությունում, Երևան, «Գիտություն», 2017, 328 էջ:

ՕՀԱՆՋԱՆՅԱՆ 1984
Օհանջանյան Ռ.Ս., Միջանձնային ազգային հարաբերությունների էթնոսոցիոլոգիական ուսումնասիրման մեթոդիկայի հարցի շուրջ // Լրաբեր հասարակական գիտությունների, 1984, № 10, 42–45:

АРУТЮНЯН 1973
Арутюнян Ю.В., Социальное и национальное: Опыт этносоциологических исследований по материалам Татарской АССР, Москва, «Наука», 1973, 331 с.

АРУТЮНЯН и др. 1979
Арутюнян Ю.В., Кахк Ю.Ю., Социологические очерки о советской Эстонии, Таллин, «Периодика», 1979, 160 с.

АРУТЮНЯН 2016
Арутюнян Ю.В., Российские армяне. этносоциологическое исследование, Ереван, «Гитутюн», 2016, 302 с.

СУСОКОЛОВ 1973
Сусоколов А.А., Непосредственное межэтническое общение и установки на межличностные контакты // Советская этнография, 1973, № 5, 73–78.

ОГАНДЖАНЯН 1989
Оганджанян Р.С., Некоторые вопросы формирования этнических стереотипов в мононациональной среде // Психологический журнал, 1989, Том 10, № 1, 49–54.

BOGARDUS 1925
Bogardus E.S., Social Distance and its Origins // Journal of Applied Sociology, 1925, № 9, 216–226.

SOROKOWSKI et al. 2020
Sorokowski P., Groyecka A., Kowal M., Sorokowska A., Białek M., Lebuda I., Dobrowolska M., Zdybek P., Karwowski M., Can Information about Pandemics Increase Negative Attitudes Toward Foreign Groups? A Case of COVID-19 Outbreak // Sustainability, 2020, № 12/12, 1–10.

***Ruben S. Ohanjanyan**, Ph.D.*

Institute of Archaeology and Ethnography, NAS of RA

FEATURES OF THE APPLICATION OF THE BOGARDUS SOCIAL DISTANCE MEASUREMENT SCALE

Keywords: social environment, social distance, cognition ethnic attitude, ethnic stereotype, cumulative scale.

Research methods employed in the study of inter-ethnic relations vary significantly. Modern information technologies have made data available to thousands of individuals, shaping their opinions about different ethnic groups. This, in turn, can have significant political, economic, and cultural implications. One commonly used research method for studying inter-ethnic relations is the social distance cu-

mulative scale developed by E. Bogardus, an American sociologist who introduced this scale in 1925.

The fundamental concept behind this scale is as follows: the willingness to engage in social interactions within a particular social environment is an indicator of the existence of social distance between individuals. Based on the extent of the distance, the following questions have been selected for the standardized questionnaire.

1. Would you accept individuals from other nationalities as your spouse or relative?
2. Do you accept individuals from other nationalities as friends?
3. Would you accept individuals from other nationalities as your neighbors?
4. Do you accept colleagues from other nationalities?
5. Can individuals from other nationalities be regarded as fellow citizens in your country?
6. Would you welcome individuals from other nationalities as guests in your country?
7. I prefer not to see them in my country.

The sample of the research study conducted in the United States spanning 1926, 1946, 1956, and 1966 involved the participation of 40 ethnic communities, including the Armenian Diaspora. Comparative analysis of the data collected during the research studies conducted in 1926 and 1966 revealed a shift in the social distance ranking of Armenians, dropping from the 16th place to the 20th. Bogardus attributed this shift to the negative attitudes Armenians held towards Turkish people, despite no direct interactions with them. These negative attitudes had been influenced by accounts from witnesses of the Armenian Genocide. This information was gathered through interviews with survey participants following the scaling process. The author notes that those materials are more interesting, and the standardized data is “colorless”.

In 2013, a study was conducted among students at the Archangelsk State University in the Russian Federation using this method. The questionnaire included 30 nationalities, including Armenians, and participants from various humanities disciplines, such as sociology, journalism, PR, and public relations, took part in the surveys. In that list of ethnic groups, Armenians were ranked 23rd (4.78 points). The results of this research provided evidence that even within specialized fields, ethnic stereotypes were challenging to overcome. These findings underscore the significance of taking ethnic stereotypes into account as a substantial element in shaping attitudes toward other ethnic groups when employing this scale for the study of inter-ethnic relations.

Рубен Самвелович Оганджанян, *к.и.н.*
Институт археологии и этнографии, НАН РА

ОСОБЕННОСТИ ПРИМЕНЕНИЯ ШКАЛЫ БОГАРДУСА, ИЗМЕРЯЮЩЕЙ СОЦИАЛЬНУЮ ДИСТАНЦИЮ

Ключевые слова: социальная среда, социальная дистанция, когниция, этническая установка, этнический стереотип, кумулятивная шкала.

Методы исследования межэтнических отношений значительно разнообразны. Современные информационные технологии сделали данные доступными для тысяч людей, формируя их мнения о различных этнических группах. Это, в свою очередь, может иметь значительные политические, экономические

и культурные последствия. Одним из распространенных методов исследования межэтнических отношений является кумулятивная шкала социальной дистанции, разработанная американским социологом Э. Богардусом, представившим ее в 1925 году.

Основная концепция этой шкалы заключается в следующем: готовность общения в конкретной социальной среде является индикатором социальной дистанции между индивидами. В зависимости от степени этой дистанции, были выбраны следующие вопросы для стандартизированного опросника.

1. Готовы ли вы принимать людей других национальностей в качестве супругов или родственников?
2. Готовы ли вы рассматривать людей других национальностей в качестве друзей?
3. Готовы ли вы принимать людей других национальностей в качестве соседей?
4. Готовы ли вы принимать людей других национальностей в качестве коллег?
5. Готовы ли вы считать людей других национальностей гражданами вашей страны?
6. Готовы ли вы приветствовать людей других национальностей в качестве гостей в вашей стране?
7. Я не хочу видеть их в своей стране.

В исследованиях, проведенных в США в 1926, 1946, 1956 и 1966 годах, в список национальностей были включены 40 этнических общин, включая армянскую диаспору. Сравнительные данные между исследованиями, проведенными в 1926 и 1966 годах, показали, что армяне снизили свой показатель с 16-го на 20-е место. Богардус отмечает, что у армян есть негативное отношение к турецкому народу, хотя личных встреч с ними не было, и это отношение было сформировано на основе рассказов свидетелей армянского геноцида. Данные были получены через интервью с участниками опроса после шкалирования. Автор отмечает, что эти материалы более интересны, чем стандартизированные данные.

В 2013 году было проведено исследование среди студентов Архангельского государственного университета Российской Федерации с использованием этого метода. В список были включены 30 национальностей, в том числе армян, которые оказались на 23-ем месте (4,78 балла). Опросы проводились среди студентов различных гуманитарных областей, таких как социология, журналистика, PR и связи с общественностью. Результаты исследования подтвердили, что довольно сложно преодолеть этнические стереотипы. Результаты подчеркивают важность учета этнических стереотипов как значимого фактора при формировании отношений с другими этническими группами.

Ներկայացվել է՝ 11.02.2025,
գրախոսվել է՝ 18.04.2025,
ընդունվել է՝ 10.07.2025:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Ասատրյան Կարեն Սաշայի
Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի կրտսեր գիտաշխատող
sardarapat01.22@gmail.com

Արմենյան Գասսիա
Կալիֆորնիայի համալսարանի (UCLA) Ֆաուլերի թանգարանի համադրողական և հետազոտական օգնական, Լոս-Անջելես, ԱՄՆ
gassiaarmenian@gmail.com

Բարսեղյան Սյուզաննա Սոսի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
syuzanna.barseghyan@gmail.com

Գալստյան Միհրան Վարդգեսի
պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի վարիչ /
ԵՊՀ Մշակութաբանության ամբիոնի դոցենտ
akoonk@yahoo.com

Զախարկևիչ Ստեփան Արթուրի
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Եվրոպական հումանիտար համալսարան, Վիլնյուս, Լիտվա
stepan.zakharkevich@ehu.lt

Խաչատուրյան Նելլի Ռաֆիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող
nelli.khachaturyan02@gmail.com

Կարապետյան Ռուբեն Սուրենի
պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի վարիչ
karapetyan.ruben.s@gmail.com

Հակոբյան Գայանե Լևոնի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
gayik20@gmail.com

Հակոբյան Մարիամ Միշայի
ԵՊՀ Պատմության ֆակուլտետի ասպիրանտ
mariam-hakobyan-1010@mail.ru

Հարությունյան Մարիամ Բագրատի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ լաբորանտ
mariamharutyunian96@gmail.com

Ճէպէճեան Հրայր Վահէի
աստուածաբանության դոկտոր
Արաբական ծոցի Աստուածաշունչի ընկերության ընդհանուր քարտուղար, Քուվեյթ
hrayr.jebejian@gmail.com

Մարկոսյան Սալվինե Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Մարտիրոսյան Գոռ Մովսեսի
սոցիալական գիտությունների թեկնածու
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի
Աշխատաշուկայի ուսումնասիրման և մասնագիտական կարիերայի կենտրոնի տնօրեն
gormartiros@gmail.com

Ներսիսյան Սոնա Արայիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
sona.nersisyan2006@gmail.com

Պողոսյան Սվետլանա Հայկի
պատմական գիտությունների թեկնածու
Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի փոխտնօրեն / ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Մշակութային մարդաբանության բաժնի ավագ գիտաշխատող
poghosyansvetlana26@aspu.am

Սվազլյան Վերժինե Գառնիկի
բանասիրական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Բանագիտության բաժնի առաջատար գիտաշխատող,
ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ
vsvaz333@yahoo.com

Վարդանյան Հրաձին Վարդանի
պատմական գիտությունների թեկնածու
ԵՊՀ Պատմության ֆակուլտետի ասիստենտ
vardanyan.h@ysu.am

Տանաջյան Լուսինե Ասատուրի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
lusine.tanajyan@gmail.com

Օհանջանյան Ռուբեն Սամվելի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
r.ohanjanyan@mail.ru

CONTENTS

A. RESEARCH PAPERS

I. RA - DIASPORA, RA - ABROAD: MUTUAL CONNECTIONS AND INTERACTIONS

Ruben Karapetyan
On the Migration Ties between the Diaspora and the Republic of Armenia 8

Hratsin Vardanyan
Mariam Hakobyan
The Policy of Identity as a Component of State–Diaspora Cooperation
(the Case of RA–Diaspora Relations) 21

Hrair Jebejian
Relations between the Armenian Communities in the Near East
and the Republic of Armenia: Current Trends, Challenges and Opportunities 34

Gayane Hakobyan
Social-Cultural Life of New Migrants in the Diaspora:
the Viewpoint of Relatives in Armenia 48

Sona Nersisyan
Experience of Integration of Russian and Indian Immigrants in Armenia 59

II. ARMENIAN COMMUNITIES OF EASTERN EUROPE

Stepan Zakharkevich
Culture of Memory of Armenian Communities in Eastern Europe and the Influence
of Historical Policies and National Projects at the Present Stage 72

Svetlana Poghosyan
Sociocultural Features of the Armenian Community of Varna:
Situation, Trends and Developments 89

Gor Martirosyan
Types of Entrepreneurship of Armenian Immigrants in Poland,
Results of the Diversification and Change of Their Activity 103

Lusine Tanajyan
Suzanna Barseghyan
Armenians in Czech Republic: Peculiarities of Community Life 113

III. ARMENIAN COMMUNITY OF THE USA

Mihran Galstyan
The Term "Repatriation" in the Context of Modern Processes of Diaspora:
the Case Study of the Armenian Community of Los Angeles 126

Verjine Svazlian
The Level of Preserving Armenianness among the Armenian-Americans
according to the Inscribed Materials of the Oral Tradition 139

IV. THEORETICAL ISSUES

Nelli Khachaturian
Mariam Harutyunyan
Religious Transmission in the Family: Theoretical Approach 156

Ruben Ohanjanyan
Features of the Application of the Bogardus Social Distance Measurement Scale 167

B. VARIA

V. REPORTS

Karen Asatryan
Certificates of the Educational System of the Armenians of Constantinople
(Late 19th – Early 20th Centuries) 176

Salvine Markosyan
The Role of Weekly Newsletter "Hayastan" in the Cultural Life
of Armenians in Constantinople 183

VI. EXHIBITION

Gassia Armenian
Remain in Light: Visions of Homeland and Diaspora 188

VII. REVIEWS

Tork Dalalyan
Lusine Hayriyan
Anahit Khechoyan
Études arméniennes contemporaines, 2023, № 15 :
La presse de langue arméniennes en France et la création d'un espace transnational 200

Antranik Dakessian
Haigazian Armenological Review: Four Books of the 43th and 44th Volumes 204

VIII. EVENTS

Suzan Pirnalyan
The 40th Year of Summer Intensive Course of Armenian Language and Culture:
an Armenian World in Venice 218

PHOTOS 221

INFORMATION ABOUT AUTHORS 230

СОДЕРЖАНИЕ

А. ИССЛЕДОВАТЕЛЬСКИЕ СТАТЬИ

I. РА–ДИАСПОРА, РА–ЗАГРАНИЦА: ВЗАИМНЫЕ СВЯЗИ И ВЗАИМОДЕЙСТВИЯ

Рубен Карапетян
О миграционных связях Диаспоры с Республикой Армения 8

Грацин Варданян
Мариам Акопян
Политика идентичности как составляющая
сотрудничества государства с диаспорой 21

Грайр Джебеджян
Отношения между армянскими общинами Ближнего Востока
и Республикой Армения: современные тенденции, вызовы и возможности 34

Гаяне Акопян
Социально-культурная жизнь новых мигрантов в Диаспоре:
точка зрения родственников в Армении 48

Сона Нерсисян
Опыт интеграции российских и индийских иммигрантов в Армении 59

II. АРМЯНСКИЕ ОБЩИНЫ ВОСТОЧНОЙ ЕВРОПЫ

Степан Захаркевич
Культура памяти армянских общин Восточной Европы и влияние на нее
исторической политики и национальных проектов в современном этапе 72

Светлана Погосян
Социально-культурные особенности армянской общины Варны:
ситуация, тенденции и развития 89

Гор Мартиросян
Виды экономической деятельности армянских иммигрантов в Польше,
результаты диверсификации и изменения этих видов деятельности 103

Лусине Танаджян
Сюзанна Барсегян
Армяне в Чешской Республике: особенности общинной жизни 113

III. АРМЯНСКАЯ ОБЩИНА США

Мигран Галстян
Термин «репатриация» в контексте современных процессов Диаспоры:
пример армянской общины Лос-Анджелеса 126

Вержине Свазлян
Уровень сохранения армянства у американских армян
по материалам устной культуры 139

IV. ТЕОРЕТИЧЕСКИЕ ВОПРОСЫ

Нелли Хачатурян
Мариам Арутюнян
Трансмиссия религиозности в семье: теоретические проблемы 156

Рубен Оганджанян
Особенности применения шкалы Богардуса, измеряющей социальную дистанцию 167

Б. VARIA

V. СООБЩЕНИЯ

Карен Асатрян
Аттестаты системы образования константинопольских армян
(конец 19-го – начало 20-го вв.) 176

Салвине Маркосян
Роль газеты «Айастан» в культурной жизни армян Константинополя 183

VI. ВЫСТАВКА

Кассия Арменян
Да пребудет с вами свет: видения родины и диаспоры 188

VII. РЕЦЕНЗИИ

Торк Далалян
Лусине Айриян
Анаит Хечоян
Études arméniennes contemporaines, 2023, № 15 : Армяноязычная пресса
во Франции и создание транснационального пространства 200

Андраник Дакесян
Haigazian Armenological Review: Четыре книги 43-го и 44-го томов 204

VIII. СОБЫТИЯ

Сюзан Пырналян
40 лет интенсивного летнего курса армянского языка и культуры:
армянский мир в Венеции 218

ФОТОГРАФИИ 221

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ 230

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
7

անգլերենի խմբագիրներ՝ Լուսինե Տանաջյան
Անահիտ Խեչոյան

ռուսերենի խմբագիր՝ Նելլի Խաչատուրյան

տեխնիկական խմբագիրներ՝ Լուսինե Տանաջյան
Սյուզաննա Բարսեղյան
Սալվինե Մարկոսյան

ձևավորող և էջադրող՝ Արթուր Հարությունյան

Շապիկի վրա՝

Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի (Վենետիկ) պատկերով բացիկ՝
Քարոլ Մարք-Բուարե Գաֆտանճյանի ընտանեկան արխիվից (Ֆրանսիա)։

ՀԱԻԱ 7